

ԴԵՊՐ ՆՈՐ ՀԱԶԱՐԱՄԵԱԿ - 4

ՄԿՐՏԻՉ ՄԱԼԽԱՍԵԱՆ

**ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՎԵՐԱԿԵՐՏՈՒՄԻ
ԱՌԱԶԱՐԿՆԵՐ**

- Գ -

ԹՈՒԱՔԱՆԱԿ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԱԼԽԱՍԵԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ
ՄՈՆՈՐԷԱԼ
1999

ՄՈՒՏՔ

1992 թուականին Երևանի մէջ լոյսին եկաւ աշխարհագրագէտ Դոկտ. Փրոֆ. Գրիգոր Աւագեանին «Հայաստանը Եւ Հայերս Աշխարհում» հետաքրքրական գրքոյկը: Հեղինակը կը յայտնէր թէ գրքոյկին նպատակն է օգնել ընթերցողին, որ աւելի իրատեսօրէն գնահատէ Հայաստանի և հայերու արդի վիճակը, և որոնէ յարատեւման ուղիներ՝ մշակելով յառաջդիմելու համագգային հիմնարկ ծրագիր: Պարտաւոր ենք ունենալ նման ծրագիր, կը շեշտէր ան իր գրքոյկին ասարտին, և որքան շուտ՝ այնքա՛ն լաւ:

Բայց ինչո՞ւ տագնապած էր հեղինակը: Որովհետև իր ուսումնասիրութեան իբրև հետևանք յայտնաբերած էր թէ «հայերու ընդհանուր թիւին կէսէն պակաս է Հայաստան ապրող հայերու թիւը», հակառակ անոր որ «հայրենիքի ուժը և տեղը աշխարհի մէջ պայմանաւորուած է անոր մէջ ապրող բնակչութեան թուով» (էջ 89):

Փրոֆ. Աւագեանը Հայաստանի աշխարհագրական պայմաններն ու բնական հարստութիւնները հաշուի առնելով, կը հիմնարկէր այն տեսակէտը՝ թէ մինչև ՏԱՍՀ ՄԻԼԻՈՆ հայեր, առանց լուրջ դժուարութեան, կրնային բարեկեցիկ կեանք մը ունենալ Հայաստանի մէջ:

• • •

Երբ մօտաորայէս տասը տարիներ առաջ Պրն. Մ. Մալխասեանը իր ներկայ հետազօտութիւնը պատրաստած է Մալխասեան Հիմնարկութեան Տնօրէններու Խորհուրդին համար, ի՞ր ալ հիմնական մտահոգութիւնն է եղած մեր ժողովուրդին յարատեւութեան հարցը՝ համագգային չափանիշով մշակուած ծրագրի մը հիման վրայ:

Թիւը անկիւնաքարային նշանակութիւն ունի որևէ ժողովուրդի համար: Անով պայմանաւոր է մշակութային, տնտեսական, ռազմական թէ ամէն այլ տեսակի բնագաւառի զօրութիւն, որովհետև՝

- ԹԻԻ-ը որա՛կ է նախ.

- ԹԻԻ-ը մարդո՛ւժ է նաև.

- ԹԻԻ-ը սպառողական շուկայ է մա՛նաւանդ, ո՛չ միայն արդիւնաբերական արտադրանքներու առումով, այլև ու յա՛տկապէս՝ մշակոյթի իմաստով: Այս վերջին պարագան առաւել ևս կարևոր է մեր ժողովուրդին համար, որովհետև ի տարբերութիւն մեզի մեր-

ձակայ աշխարհագրական տարածքներու մէջ պատմութեան հոլովոյթի ընթացքին անհետացած այլացեղ ժողովուրդներու՝ մեր մշակոյթը կրցած է ապրեցնել մեզ ընթացքին դարերու, երբ գիտական և հաղորդակցական միջոցները տակաւին չէին յառաջացուցած այն յեղաշրջումը, որուն ականատեսներն ենք այսօր, և որ անցնող բոլոր դարերու այլատերիչ ուժերը կը գլէ կ'անցնի իր ուժգնութեամբ:

Ժողովուրդի մը թիւը, անշուշտ, ուղղակի կախեալ է թէ՛ անոր հայրենիքին, և թէ՛ հայրենիքէն դուրս ապրող հաւաքականութիւններու տեղական պայմաններէն: Եթէ նպաստաւոր են պայմանները՝ թիւը կ'աճի. հակառակ պարագային՝ ականատես կը դառնանք թիւի նուազումի և մինչև իսկ անհետացումի...:

Հետաքրքրական պատկեր մը պիտի ստեղծուի մեր աչքերուն՝ Արևմտեան և Արևելեան Հայաստանի հայ բնակչութեան վիճակագրական հետևեալ տուեալներուն բաղդատականը կատարելու պարագային:

1831-ին, Արևելեան Հայաստանի Ռուսիոյ կցուելէն անմիջապէս ետք, Արևելեան Հայաստանի հայութիւնը կազմած է 161,700 հոգի...: 1913-ի մարդահամարով, այդ թիւը բարձրացած էր 1,010,000-ի. այսինքն՝ բազմապատկուած 6.2 անգամ (*Հայկական Սովետական Հանրագիտարան, Սովետական Հայաստան, - ԺԳ. լրացուցիչ հատոր, - Երևան, 1987, էջ 23*):

1822-ին, ըստ գերման վիճակագրող Հասելին, ամբողջ Օսմանեան Կայսրութեան մէջ բնակող հայերու թիւը եղած է 1,690,000: 1913-ին, ըստ գերման ծանօթ հայասէր Դոկտ. Եոհաննէս Լեփսիուսին, այդ թիւը եղած է 1,880,000: Օսմանահպատակ հայոց վերաբերող այս տուեալները ճշգրիտ ըլլան թէ ոչ, մէկ բան կը մնայ անվիճելի, - Օսմանեան Կայսրութեան մէջ հայերու թիւը համարեա աճ չէ արձանագրած ամբողջ 90 տարի, մինչ Ռուսական Կայսրութեան հայոց թիւը 80 տարուան ընթացքին աճած է 6.2 անգամով...:

Այս թուանշանները եթէ մէկ կողմէ ցոյց կու տան՝ թրքացումի և ռուսացումի քաղաքականութեան, կամ յայտնի և անյայտ բռնահանութիւններու թէ կոտորածներու աստիճանաշափերը, միւս կողմէ կը հաստատեն կարևորութիւնը յարաբերաբար թոյլատու պայմաններու ներքև հողի մը վրայ, ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՀՈՂԻՆ ՎՐԱՅ ՀԱՄԱԽՈՒՄԲ ԲՆԱԿՈՒԹԵԱՆ:

Այս թուանշանները նաև ցոյց կու տան թէ Մ. Մալխասեանը իրապաշտ մօտեցում մը որդեգրած է իր հետազօտութեան մէջ՝ յաջորդող երեսնամեակին հայութեան թիւը կրկնապատկուած տեսնելու իր թելադրական ցանկութեամբ:

Աւելի՛ն, այս թուանշանները նաև կը հաստատեն անհերքելի ճշմարտութիւն մը, որուն ապացոյցները բազմաթիւ առիթներով

տուած է մեր պատմութիւնը,– թիւի բացակայութիւնը կը նշանակէ՝ կորուստ պատեճական հողերու (Արևմտեան Հայաստանի և Նախիջևանի ներկան)։ վտանգում ինքնիշխանութեան (Հայաստանը Ատրպէյճանի և Վրաստանի միջև բաժնելու ստալինեան ծրագիրը)։ անհետացում (Աեհաստանէն մինչև Ճավա և Սումաթրա կորսուած գաղութներու պարագան)։ մինչ թիւի ներկայութիւնը կը նշանակէ՝ վերատիրացում պատեճական իրաւունքներու (Արցախի օրինակը)։ պահպանում ազգային ինքնութեան (լիբանանահայ գաղութին օրինակը)։

Կարելի չէ չտագնապիլ՝ երբ մէկ կողմէ ականջալուր կը դառնանք Հայաստանի արդի պայմաններուն բերումով հարիւր հազարաւոր հայերու իրենց հայրենիքէն արտագաղթին, իսկ միւս կողմէ կը տեղեկանանք թէ մեր հայրենիքը շրջապատող ազգեր երեսուն տարի ետք պիտի կրկնապատկած ըլլան իրենց բնակչութեան թիւը։

Եւ կարելի չէ չվրդովիլ՝ երբ այս գործչկին մէջ ներկայացուող Ահարոն Ահարոնեանին տուեալներէն կը պարզուի թէ հայ հոգևոր իշխանութիւններ հայ գաղթօճախներու մէջ քիչ անգամ և չնչին չափով կը պայքարին խառնամուսնութիւններու և ուծացումի դէմ, մինչ Զօրի Բալայեանին տուեալներով կը հաստատուի թէ օտար հոգևոր իշխանութիւններ իրենց հաւատացեալներուն բազմածնութիւնը սրբազան սկզբունքի վերածած կը շրջին դուռէ դուռ...։

Ժողովրդագրական խնդիրները տարբեր ժամանակաշրջաններու տարբեր կ'ըլլան իրարմէ, ինչպէս որ տարբեր կ'ըլլան տարբեր երկիրներու պարագային։

Եթէ Միացեալ Նահանգներու ժողովրդագրական քաղաքականութիւնը կը խարսխուի թուաաւմաններու (քոթա) վրայ, որպէսզի հակակշռուի օտար ներհոսքը, ապա Թուրքիոյ ժողովրդագրական քաղաքականութեան ամենամեծ մարտահրաւէրը կը կազմէ Թուրքիոյ քիւրտ բնակչութեան յարաբերաբար արագ աճը և այդ աճին հետևանքով Թուրքիոյ ի վնաս ապագայ Քիւրտիստանի մը գոյացութեան կանխարգիլումը։

Մե'ր պարագային, մեր ժողովրդագրական ներկայ քաղաքականութիւնը հարկադրանքին տակ է ունենալու եռոտանի խարսխ մը,– կանխարգիլում արտագաղթի, մերձակայ երկիրներու բնակչային աճին յարաբերակցութեամբ բազմացում հայ բնակչութեան թիւի, պահպանում գաղթահայութեան։

Այս եռադէմ քաղաքականութեան արդիւնաւորութիւնը անմիջականօրէն կախեալ է համահայկական ժողովրդագրական ծրագրի մը մշակումէն և հայութեան բոլոր հատուածներուն գործակցութեամբ անոր գործադրութենէն։

Ահաապիկ նման կարևոր աշխատութեան մը ազգովին լծուելու կենսական հարցն է որ բարձրացուցած է Պրն. Մ. Մալխասեանը

իր «Թուաքանակ» հետազոտությամբ, հայ հանրության ուշադրության բերելով թուաքանակի անկհունաքարային հարցը՝ մեր ժողովորդին ապագայ լինելիության և այդ լինելիության որակին տեսանկյունով վերլուծելով զայն:

Տեղին պիտի ըլլայ անլցնել թէ այս հետազոտութիւնը անքակտելի ամբողջութիւն մը կը կազմէ Մալխասեանին նախորդ ուսումնասիրութիւններուն հետ: Թիւր թէ՛ կը նպաստէ ազգային տնտեսության մը կամ ազգային ֆինանսի զարգացումին, և թէ՛ կը նպաստաւորուի անոնց զարգացումէն: Թէ՛ զարկ կու տայ ազգային կրթության և մշակոյթին, և թէ՛ կը խթանուի անոնցմով:

Կը մնայ մաղթել որ յա՛տկապէս կրթական և կրօնական պատասխանատուներ իրենց ուսումնաքարոզչական գործունէության ընթացքին միշտ նկատի ունենան թիւր իր անկհունաքարային նշանակութեամբ:

Դոկտ. ՎԱՉԷ ՂԱԶԱՐԵԱՆ

I- ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՒ ԾԱՆՅՈԹՈՒԹԻՒՆ

Ժողովրդագրությունը (Demography)

Այն ընկերային գիտություն է, որ կ'ուսումնասիրե մարդկային բնակչություններու կառույցը (անոնց բաշխումը ըստ տարիքի, սեռի, ընտանեկան վիճակի, կայլն), և անոնց զանազան երևոյթները (ծնունդ, մահ, գաղթ, կայլն): Ժողովրդագրությունը կ'ենթադրէ վիճակագրական չափումներ և ուսողական (mathematical) մեթոտներ:

Իր էութեամբ իսկ՝ ժողովրդագրությունը կապուած է զանազան քաղաքական, ընկերային և կենսաբանական գիտություններու մատակարարած վիճակագրական տեղեկություններուն, և մարդահամարներու արդիւնքներուն:

Ժողովրդագրությունը հետաքրքրող խնդիրներն են.–

ա.– Բնակչութեան թուային փոփոխությունները (լատելում, նուագում).

բ.– Բնակչութեան կազմը.

գ.– Բնակչութեան սիրումը՝ ըստ վայրի.

դ.– Նախորդ երեք մարզերուն մէջ տեղի ունեցող փոփոխություններուն յարաբերությունը իրարու հետ.

ե.– Պատճառները այս փոփոխություններուն.

զ.– Մշակումը տեսություններու շարքի մը՝ բացատրելու համար երևոյթները՝ զանոնք ներկայացնելով տախտակներու և բաղդատություններու միջոցով.

է.– Կատարումը նախատեսություններու բնակչություններու մասին՝ տնտեսական և ընկերային ծրագրում կարելի դարձնելու համար:

II- ԱՇԽԱՐՀԻ ԲՆԱԿՉԱՅԻՆ ԿԱՅՈՒԹԻՒՆԸ

Ա.- ՄՈՒՏՔ

Վերջին 300 տարիներում զգալիորեն աճած է մարդկության թիվը: Այդ աճը սաստկացած է մեծ չափով վերջին 50 տարիներում:

Աշխարհի բնակչությունը, եթե իր վիճակին ձգուի առանց հսկայի, կը կրկնապատկուի իրաքանչիւր 25 տարին անգամ մը:

Բնակչության գերաճը հիմնական մտահոգություններէն մէկն է աշխարհի յաջորդ 25 տարիներում այդ աճը պիտի ունենայ անլի հեռահաս ազդեցություններ մարդկության կեանքին վրայ. տնտեսական և ընկերային հարցերը, որոնք սերտ կապ ունին թուաքանակին հետ, խոր փոփոխության պիտի ենթարկուին:

Բ.- ԲՆԱԿՉԱՅԻՆ ՏԱԳՆԱՊԸ

Ահա՛ հինգ գլխաւոր հարցերը այդ տագնապին.-

ա.- Թուային աճը.

բ.- Բնակչային կուտակումը քաղաքներում մէջ.

գ.- Գաւառին բնակչազրկումը.

դ.- Տոմային-ցեղային փոքրամասնություններու պատշաճումի աստիճանին անբաւարարությունը.

ե.- Ընտրածնումի խնդիրը (*the eugenic problem*, որ մարմնապէս և միտքով քաջառողջ զուակներու ծնունդը ապահովելն է):

Բնակչային գերաճին կապակցութեամբ կան երեք գլխաւոր մտածելակերպեր.-

ա.- Մալթուսի տեսակէտը.

բ.- Քարլ Մարքսի մօտեցումը.

գ.- Արդի արևմտեանը:

1.- Մալթուսի տեսակէտը

Մալթուսի տեսակէտը (1789)՝ կարիքի, պատերազմներու և ընկերային դժբախտություններու ծագումը կը տեսնէ բնակչություններու թիւին և անոնց արտադրամիջոցներում մարդկային փոխարարութեան մէջ:

Ըստ Մալթուսին՝ ժողովուրդին թուային աճումը կ'ընթանայ

երկրաչափական յառաջատուութեամբ (բազմապատկումով), իսկ սնունդի աճումը՝ թուարանական (գումարումով)։ ուրեմն, պատերազմ, սով, համաճարակներ, վաղահաս մահ և այլ աղէտներ միջոցներ են գերաճի հարցը մեղմելու:

2.- Մարքսի տեսակէտը

Մարքսի հետևորդները շեշտը կը դնեն սննդանհիւթերու բաշխումին վրայ: Ըստ անոնց, եթէ սնունդի աղբիւրները օգտագործուէին ճիշդ ձևով, և բաշխումը կատարուէր արդարօրէն՝ ամբողջ մարդկութիւնը կրնար ապրիլ գոյութիւն ունեցող սննդեղէնով: Ըստ անոնց՝ բնակչային բոլոր խնդիրները պիտի անհետանային համայնավարական արտադրողական դրութեան մը տակ. ծնունդներու սակը ինքնաբերաբար պիտի նուազէր՝ կենսամակարդակի բարձրացումին և երախտներու աշխատանքին նուազումին պատճառով: Բաց պարզուեցաւ որ այս նախատեսութիւնները իրականութիւն ըլլալէ աւելի՛ հաւանօք ու փափա՛ք էին:

3.- Արդի արևմտեան տեսակէտը

Այս տեսակէտը տակաւին չէ զգեցած վերջնական ձև մը. Արևմուտքի ժողովրդագիրները կը գտնուին որոնումի փուլին մէջ: Անոնք չեն խորհիր որ ԹԻԻ-ը առանձինն բուն հարցն է, այլ թիւին կը կապեն ուրիշ պատճառներ ալ, ինչպէս քաղաքականը, տնտեսականը, ևայլն:

4.- ԲՆԱԿՉՈՒԹԵԱՆ ԹՈՒԱՅԻՆ ԱՃԸ

Բնակչութեան աճը (այդ աճին համեմատութիւնը) հիմնական ազդակ մըն է, որովհետև փոփոխութիւններ կը յառաջացնէ նաև բնակչութեան ԿԱԶՄ-էն ներս: Նկատելով որ ընկերութեան մը բոլոր հատուածները նոյն համեմատութեամբ չեն աճիր՝ թիւը կը բերէ նաև ընդհանուր հաւասարակշռութեան խախտում:

Յատկանշական երևոյթներ կը պարզէ աշխարհի բնակչութեան աճի համեմատութիւնը: 1965-ին աշխարհի բնակչութեան թիւն էր 3.3 միլիար, որուն վրայ տարեկան աւելցած է 62-էն 63 միլիոն հոգի, օրական՝ 170,000-էն 172,000 անձ:


Ծնունդներու համեմատական աճը եղած է ցա՛ճ յառաջացեալ երկիրներու մէջ (Հիւսիսային Ամերիկա, Եւրոպա, նախկին Խորհրդային Միութիւն, Ովկիանիա). եղած է բարձր Ասիոյ, Ափրիկէի, Կեդրոնական Ամերիկայի, Հարաւային Ամերիկայի մէջ:

1965-էն ասդին երկրարող շրջանին՝ աճը տեղի ունեցած է այնքա՛ն արագ, որ մարդկութեան թիւը 2000 թուականին պիտի ըլլայ 6.3 միլիար:

Այս ընթացքով, 2025 թուականին աշխարհի բնակչությունը անգամ մը ևս պիտի կրկնապատկուի և հասնի 16.6 միլիարի:

Ծնունդներու և մահերու միջև համեմատությունը կը կոչուի «Բնական Աճում»: «Գաղթաճում» կը կոչուի համեմատությունը ներգաղթին և արտագաղթին միջև: Ուրեմն՝ երկու կերպերով է որ կը փոխուի բնակչությունը, – Սերնդագործումով և Գաղթով:

Հետևեալ տախտակը ցոյց կու տայ մարդկութեան աճին պատկերը՝ սկսած մէկուկէս միլիոն տարի առաջ և երկարող մինչև ներկան: Աճումին խոշորագոյն մասը տեղի ունեցած է վերջին 300 տարիներուն:



Կողքի էջով՝ երկու տախտակ, մէկը ցոյց տուող աշխարհի բնակչութեան աճը Բ. Համաշխարհային Պատերազմէն ետք, միւսը՝ տարեկան աճին համեմատությունը.–

Աշխարհի բնակչության տարեկան աճը Բ. Պատերազմէն ետք տոկոսներով

Ծրջան	1950-61	1960-66
Բովանդակ աշխարհ	1.8	1.9
Ափրիկէ	2.1	2.3
Մ. Նահանգներ և Գանատա	1.8	1.5
Լատին Ամերիկա	2.8	2.8
Հարավային Ասիա	2.2	2.5
Արևելեան Ասիա	2.0	1.4
Երոպա	0.8	0.9
Ովկիանիա	2.5	2.1
Խորհրդային Միութիւն	1.7	1.4

Աշխարհի բնակչության տարեկան աճին համեմատութիւնը տոկոսներով

Ծրջան	1965-70	1970-75	1975-80
Բովանդակ աշխարհ	2.0	2.0	2.0
Ափրիկէ	2.6	2.8	2.9
Մ. Նահանգներ և Գանատա	1.2	1.3	1.4
Լատին Ամերիկա	2.8	2.9	2.9
Հարավային Ասիա	2.8	2.8	2.7
Արևելեան Ասիա	1.8	1.7	1.6
Երոպա	0.8	0.7	0.7
Ովկիանիա	2.0	2.1	2.2
Խորհրդային Միութիւն	1.0	1.0	1.1

Աղբիւր.– Միացեալ Ազգերու Կազմակերպութեան Տնտեսական և Ընկերային Խորհուրդ, Բնակչութեան Ցանձնաժողով, Աշխարհի Բնակչութեան Կազմութիւնը (E/CN.9/231) (Ժընև, 1969), էջ 119:

Ծննդաբերութիւններու վրայ հակակշիռը քսաներորդ դարու ամէնէն հրատապ հարցերէն մէկն է, որովհետև մարդկութեան գերաճը զսպելու համար գործածելի միջոցներուն մէջ ամէնէն ձեռնադրուող կը թուի ըլլալ, ամէնէն շօշափելիին:

Ի՞նչ կ'ուզեն՝ ըսե՛ն, և ի՞նչ պատճառաբանութիւն ալ յստաջ քշեն եկեղեցիներն ու ալլազան խումբեր՝ իրականութենէն խուսափում չկա՛յ.– ՊԷՏԶ Է ՀԿԱԿՇՈՒՒԻ ՄԱՐԴԿՈՒԹԵԱՆ ԹՈՒԱՅԻՆ ԱԾԸ:

Գ.- ԲԱԶՄԱԾՆՈՒԹԻՒՆԸ

Հետաքրքրական է 1971-ին Լիբանանի մէջ պատրաստուած հետևեալ տախտակը: Ան ցոյց կու տայ տարիքն ու կրօնքը ա՛յդ տարի զաւակ ունեցող լիբանանցի կիներուն:

կիներու տարիք	Քրիստոնեաներ	Իսլամներ
15-19	0.6	1.2
20-24	1,5	2.2
25-29	2.5	3.8
30-34	3.8	5.4
35-39	4.3	6.5
40-44	4.8	7.1
45-49	5.2	7.7
Գումար	3.8	5.1

Այս տախտակին մէջ պարզուող պատկերը չափազանց խօսուն է.- Իսլամ կիները կ'ամուսնանան աւելի փոքր տարիքի, և աւելի բազմածին են՝ նոյնիսկ Լիբանանի նման արևմտականացած երկրի մը մէջ:

Բազմածնութեան աղընչութեամբ յատկանշական է պատկերը, որ կը պարզուի հետևեալ վիճակագրական երկու տախտակներէն.-

Բազմածնութեան համեմատութիւնը, ըստ շրջաններու, Խորհրդային Միութեան մէջ

	բնակչո-տոկոս	ծնունդներու տոկոս, 1973	ծնունդներու տարբերութիւն ըստ երկրի
Պալթիք (լատվիացի, լիթուանիացի, էսթոնիացի)	3	15.1	13.9-16.0
Արևմտեան (ռուս, ուքրանիացի, պելոռուս, մոլտավիացի)	79	15.2	14.9-30.4
Կովկասեան (վրացի, հայ, ազերի)	5	22.2	18.2-25.4
Ասիական (տանիկ, թուրքմէն, իւզպէք, քիրկիզ, դազախ)	13	29.4	23.2-35.6

Աղբիւր.- ՄԱԿ, *Տնտեսական և Ընկերային Խորհուրդ*, «Յետ-Պատերազմեան Ժողովրդագրական Միտումներ և Նախատեսութիւն Մինչև 2000 Թուական», պատրաստուած 1975-ի Յուլիսին՝ Եւրոպայի Տնտեսական Յանձնաժողովի Քարտուղարութեան կողմէ:

ՆՇԵԼԻ ԿԷՏԵՐ.-

ա.- Ասիական շրջանին բնակչությունը իսլամ է և ունի բարձրագույն սակը ծնունդներու.

բ.- Կովկասեան շրջանը, որ ունի երկրորդ բարձրագույն սակը, իր մէջ կը հաշուէ իսլամ Ատրպէյճանն ու այլ իսլամ հաւաքականութիւններ:

Հրեայ և արաբ ծնունդներ Իսրայէլի մէջ

	սերնդագործութեան ընդհ. տոկոս (1966)	ծնունդներու տոկոս (1970)	բնական աճի տոկոս (1970)
Արաբներ	4.00	45.6	3.9
Հրեաներ	16.5	24.2	1.7
Երոպացիներ	1.19		
Իսրայէլացիներ	1.35		
Ափրիկաասիացիներ	2.17		

Աղբիւր.- *Սերնդագործութեան ընդհանուր տոկոս Տոլ Ֆրիտլանտորի «Իսրայէլ» գիրքէն, Պեռնարտ Պերըլսընի խմբագրած «Բնակչային Քաղաքականութիւն Զարգացած Երկիրներու Մէջ» գիրքէն (Նիւ Եորք, 1974):*

ՆՇԵԼԻ ԿԷՏԵՐ.-

ա.- Իսլամներու աճումի սակը կրկինն է հրեաներու սակին՝ Իսրայէլի մէջ. և այդ սակերուն համեմատութիւնը մնացած է նոյնը:

բ.- Վիճակագրութիւնը կը վերաբերի 1966-1970 տարիներուն:

Կանոնաւոր լաւելումի բացառիկ պարագայ մըն է Պոլսոյ բնակչութեան թուային աճը վերջին 150 տարիներուն: Այսօր շուրջ ինը միլիոն բնակիչ հաշուող Պոլսոյ բնակչութեան կազմը հետևեալն էր 1849-ին՝ ըստ Almanach de L'Empire Ottoman-ին.-

Պոլսոյ և շրջակայից բնակչութիւն	վիսր/քյու միլիոն/հզ.	ընտանիք կազմած		ընդհանուր թուահամար սեռերու
		այր	կին	
ստրուկներ	-	5,000	47,000	400,000
իսլամներ	68,000	139,000	141,000	
հայեր (ստաբլ.)	16,000	93,400	95,600	205,000
հայեր (ոչ-ստաբ.)	-	8,420	8,580	17,000
յոյներ	33,000	50,000	54,000	137,000
հրեաներ	-	10,800	13,200	24,000
օտարահպատակ	6,000	3,960	4,040	14,000
	123,000	310,580	363,420	797,000

Ուրիշ կարևոր տախտակ մը.-

Հայերու և թուրքերու ընդհանուր թուաքանակը աշխարհի վրայ

տարեթիւ	հայեր	թուրքեր
1926-27	2,900,000	13,648,000
1966	5,000,000	31,391,000
1970	5,309,000	35,666,000
1985-87	5,450,000	40,347,719

ԵՐԿՈՒ ՏԱԽՏԱԿՆԵՐՈՒՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ՆՇԵԼԻ ԿԷՏԵՐ.-

1.- Իսլամները (թուրքեր և 52,000 գերիներ) միայն կէսն են քաղաքին բնակչութեան (գերիներէն 47,000-ը կին է)։

2.- Հայերը աւելի քան քառորդն են (երկու թուրքի դէմ մէկ հայ)։

3.- 150 տարի ետք, հայերուն թիւը 220,000-էն իջած է 30,000-ի, որ հաւանական թիւն է այսօրուան պոլսահայութեան։

4.- Յոյներուն թիւը 137,000-էն իջած է (հաւանաբար) 25,000-ի։

5.- Թուրքերուն թիւը 400,000-էն բարձրացած է շուրջ 7 միլիոնի։ Այսօր Պոլիսը բացառաբար թուրքերէ բնակուած քաղաք մըն է։

6.- Աւելի՛ն՝ ներկայիս Թուրքիոյ բնակչութիւնը անցած է 40 միլիոնի սահմանը՝ իր մէջ հաշուելով 30 միլիոնէ աւելի թուրք։

Բացայայտ է որ թուրք իշխանութիւնները ծրագրուած աշխատանք յառաջ տարած են իրենց թիւը աճեցնելու ուղղութեամբ, իսկ մենք ոչինչ ըրած ենք. ո՛չ մէկ հետևողական ճիգ ի գործ դրած ենք Սփիւրքի և Հայաստանի մէջ, մինչ ամէնօրեայ մտահոգութիւն ու պայքա՛ր պէտք է ըլլայ ԹԻԻ-ը, և գլխաւոր մտասկեռում՝ անոր աճումը, աշխարհիկ թէ հոգևոր ղեկավարութեան համար։

Թուային յատկումի ուրիշ ուշագրաւ օրինակ մըն է Քեպէքը։ 18-րդ դարու կէսերուն, Քեպէքի մէջ կար 65,000 ֆրանսախօս՝ երբ անգլիացիները գրաւեցին «Նոր Ֆրանսա»ն և ամէն միջոցի դիմեցին իրենց լեզուն և մշակոյթը պարտադրելու համար անոր։ Բայց ձախողեցան, որովհետև ֆրանսախօս կղերականութիւնը, ի շարս ուրիշ միջոցառումներու՝ հրահրեց ժողովուրդը դէպի բազմաձևութիւն։ Այսօր 6,500,000-ի կը հասնի Քեպէքի ֆրանսախօս բնակչութիւնը։

Հայը Հայաստանի մէջ եղած է բազմաժին ԻՆՔՆԱԲԵՐԱԲԱՐ, բնագոյով, հաւանաբար հակազդելու համար ջարդերուն և արտագաղթին պարտադրած շարունակական կորուստներուն: Բայց որքա՛ն ալ բազմաժին՝ չէ՛ կրցած պահել թուային աճի տևական յաւելումը, որ անհրաժեշտ է ԱՌՈՂՋ ՌԻ ՈՂՋ ժողովուրդի մը համար՝ բնականոն շարունակականութեան մը պահպանումին տեսակէտէն:¹

1 Մեր ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՎԵՐԱԿԵՐՏՈՒՄԻ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ շարքին հատորներէն ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ-ի մէջ, յենելով մեր հաշուումներուն վրայ, գտած ենք որ մեր չափը ունեցող ժողովուրդի մը պարագային նուազագոյն անհրաժեշտ թիւը առողջ գոյատևումի համար՝ ԵՕԹԸ ՄԻԼԻՈՆ է: